



ԱՌՅԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

1. Անհրաժեշտ է մուտք գործել <https://www.e-cadastre.am/> կայք:



2. Գրանցված լինելու պարագայում մուտքագրել Ձեր մուտքանունը և գատնաբառը(էլ. հասցե և գաղտնաբառ): Եթե գրանցված չէք համակարգում ապա անհրաժեշտ է սեղմել «Մուտք» կոճակին:



Հաջորդաբար սեղմել «Գրանցում» կոճակը և մուտքագրել գրանցման համար անհրաժեշտ տվյալները(* աստղանիշով նշված բոլոր դաշտերը ենթակա են պարտադիր լրացման):

- Դիմումի մուտքագրում
- Դիմումի ընթացք
- Փաստաթղթերի դիմում
- Տեղեկատվության հարցում
- Քարտեզ

Մուտք համակարգ

Էլ. նամակ

Գաղտնաբառ

Մուտք

Մուտք գրելու քաղաքնապատկերը **Գրանցում**

Անուն*

Հայրանուն

Ազգանուն*

Երկիր*

Քջչային հեռախոսահամար*

+374

Կայնականացման քարտ*

Ինտեռնետ հեռախոսազանգի վիճակ թեմեր:

ՀՇՀ*

Անձնագրի սերիա և համար

Էլ. փոստի հասցե*

Գաղտնաբառ*

Հաստատել գաղտնաբառը*


Ես ուրիշ չեմ

reCAPTCHA
Քարտեզային - Պայմանավոր


Գրանցվել

Գրանցումը բարեհաջող ավարտելու համար, Ձեր կողմից նշված էլեկտրոնային փոստի հասցեին կուղարկվի գրանցումը հաստատող հղում, որով անցնելուց հետո Դուք կկարողանաք սկսել աշխատանքը համակարգում:

3. Դիմումներ մուտքագրելու համար անհրաժեշտ է մուտք գործել «Դիմումի մուտքագրում» բաժին:



4. Բաժինը ընտրելուց հետո բացվում է ստորև նշված պատուհանը:



5. Դիմումի մուտքագրման գործընթացը սկսելու համար անհրաժեշտ է լրացնել անշարժ գույքի միավորի հասցեի համար նախատեսված դաշտերը: Անհրաժեշտ է մուտքագրել սեփականության վկայականի համարը կամ կադաստրային ծածկագիրը և սեղմել «Փնտրել» կոճակը: Սեղմելուց հետո ինքնաշխատ կերպով կլրացվեն գույքի հասցեի համապատասխան դաշտերը: Եթե չունեք սեփականության վկայականի համար կամ կադաստրային ծածկագիր, ապա անհրաժեշտ է մուտքագրել անշարժ գույքի միավորի հասցեն (ամբողջապես կամ մասամբ) և նույնպես սեղմել «Փնտրել» կոճակը: Առաջարկվող հասցեների ցանկից ընտրել Ձեր կողմից փնտրվող հասցեն, որն ինքնաշխատ եղանակով կարտացույլի համապատասխան դաշտերում:

6. Կախված նրանից թե գույքը գտնվում է սահմանամերձ կամ բարձր լեռնային գոտում, «Գոտի» դաշտում անհրաժեշտ է ընտրել համապատասխան տարբերակը:

7. «Տեսակը» դաշտում անհրաժեշտ է ընտրել ներկայացվող դիմումի տեսակը:

Անհրաժեշտ է նկատի ունենալ որ դիմումների որոշակի տեսակների համար պահանջվում է էլեկտրոնային ստորագրություն: Ցանկը ստորև.

1	Այլ տեղեկատվության տրամադրում	
2	Այլ տեղեկատվության տրամադրում (պետական մարմին)	
3	Անշարժ գույքի հասցեի գրանցում	Պահանջվում է էլեկտրոնային ստորագրություն
4	Անվանափոխման վերաբերյալ գրառման կատարում	
5	Բռնագանձման գործընթացը սկսելու, դադարեցնելու կամ ավարտելու վերաբերյալ տեղեկությունների ներկայացում	
6	Գյուղատնտեսական հողամասի նկատմամբ իրավունքի գրանցում	Պահանջվում է էլեկտրոնային ստորագրություն
7	Գյուղատնտեսական հողամասի վերաբերյալ միասնական տեղեկատվության տրամադրում	
8	Գյուղիտղերի նկատմամբ գրանցված իրավունքների մասին տեղեկատվության տրամադրում	
9	Գյուղիտղերի նկատմամբ սահմանափակումների մասին տեղեկատվության տրամադրում	
10	Գույքի նկատմամբ գրանցված իրավունքների առկայության մասին դիմում	Պահանջվում է էլեկտրոնային ստորագրություն
11	Գրանցված իրավունքների մասին տեղեկատվության տրամադրում	
12	Եռակողմ պայմանագրով գյուղատնտեսական հողամասի նկատմամբ իրավունքների պետական գրանցում	Պահանջվում է էլեկտրոնային ստորագրություն
13	Եռակողմ պայմանագրով գյուղատնտեսական հողամասի նկատմամբ իրավունքների պետական գրանցում (սահմանամերձ և բարձր լեռնային)	Պահանջվում է էլեկտրոնային ստորագրություն
14	Եռակողմ պայմանագրով իրավունքների պետական գրանցում	Պահանջվում է էլեկտրոնային ստորագրություն
15	Եռակողմ պայմանագրով իրավունքների պետական գրանցում (սահմանամերձ և բարձր լեռնային)	Պահանջվում է էլեկտրոնային ստորագրություն
16	Իրավունքի դադարման պետական գրանցում	Պահանջվում է էլեկտրոնային ստորագրություն
17	Իրավունքի պետական գրանցում	Պահանջվում է էլեկտրոնային ստորագրություն
18	Կադաստրային արժեքի վերաբերյալ տեղեկատվության տրամադրում	
19	Կրկնօրինակի տրամադրում	
20	Կրկնօրինակի տրամադրում գյուղատնտեսական նշանակության հողամասի	
21	Կցում գործին	
22	Միասնական տեղեկանքի տրամադրում և իրավունքի դադարեցում	Պահանջվում է էլեկտրոնային ստորագրություն
23	Միասնական տեղեկատվության տրամադրում	
24	Միասնական տեղեկատվության տրամադրում (Շիրակի և Լոռու մարզեր)	
25	Ներկայացված փաստաթղթերի հետ վերադարձ	Պահանջվում է էլեկտրոնային ստորագրություն
26	Նոտարի ծանուցում	Պահանջվում է էլեկտրոնային ստորագրություն
27	Նոր վկայականի տրամադրում	Պահանջվում է էլեկտրոնային ստորագրություն
28	Սահմանափակման պետական գրանցում	Պահանջվում է էլեկտրոնային ստորագրություն
29	Սահմանափակումների մասին տեղեկատվության տրամադրում	
30	Սլախների ուղղում	Պահանջվում է էլեկտրոնային ստորագրություն
31	Վարույթի դադարեցում	Պահանջվում է էլեկտրոնային ստորագրություն
32	Վրիպակի ուղղում	
33	Փաստաթղթերի պատճենների տրամադրում	Պահանջվում է էլեկտրոնային ստորագրություն
34	Քարտեզագրական նյութերի տեղեկատվության տրամադրում	

8. «Կատարման օրեր» դաշտում անհրաժեշտ է ընտրել կատարման օրերի քանակը: Ըստ ընտրված օրերի համակարգը ինքնաշխատ եղանակով սահմանում է վճարման ենթակա գումարի չափը: **Պետական տուրքի դաշտը * աստղանիշով նշված լինելու պարագայում, անհրաժեշտ է իրականացնել վճարման ենթակա պետական տուրքի տեսակի և դրանից ածանցյալ գումարի չափի ընտրություն:**

9. Վճարումները հնարավոր է իրականացնել ինչպես www.e-payments.am պետական վճարումների էլեկտրոնային համակարգի միջոցով, այնպես էլ դիմումի ներկայացման «վճարման» փուլում, կայքին ինտեգրված վճարային համակարգի միջոցով:

10. «Փաստաթղթի տեսակ» դաշտում անհրաժեշտ է ընտրել դիմումին կից ներկայացվող փաստաթղթերի տեսակները:

11. «Նշումներ» դաշտում կարելի է լրացնել դիմումին առընչվող հավելյալ տեղեկատվություն:


12. Հաջորդ փուլ անցնելու համար անհրաժեշտ է սեղմել «Գրանցել» կամ «Հաստատել» կոճակը:

13. Այնուհետև կբացվի փաստաթղթերի վերբեռնում էջը:

Եթե ընտրված է եղել էլեկտրոնային ստորագրություն պահանջող դիմումի տեսակ, ապա անհրաժեշտ է ներբեռնել համակարգի կողմից գեներացված դիմումը, ստորագրել այն և վերբեռնել համակարգ: Դիմումին կից ներկայացվող փաստաթղթերը նույնպես անհրաժեշտ է ստորագրել էլեկտրոնային ստորագրությամբ և վերբեռնել համակարգ:

Եթե ընտրված է եղել էլեկտրոնային ստորագրություն չպահանջող դիմումի տեսակ, ապա միայն անհրաժեշտ է վերբեռնել դիմումին կից ներկայացվող փաստաթղթերը:

Բոլոր վերբեռնվող փաստաթղթերը պետք է ունենան .pdf ձևաչափ: Մեկից ավելի էջերից բաղկացած փաստաթղթերը պետք է ներկայացվեն 1 ամբողջական ֆայլով:



14. Դիմումի հաստատումից հետո ակտիվանում է վճարման համար նախատեսված բաժինը: Կայքին ինտեգրված վճարային համակարգը առաջարկում է վճարման իրականացման համար ընտրել համապատասխան բանկի տարբերակ:

Վճարում իրականացնողի բանկային քարտը կարող է և չլինել առաջարկվող բանկերից որևէ մեկի կողմից տրամադրված քարտ, այն կարող է տրամադրված լինել ցանկացած բանկի կողմից:

Անհրաժեշտ է լրացնել Ձեր բանկային քարտի տվյալները: Հաստատել վճարումը, այնուհետև հաղորդագրության միջոցով ստացված կոդը լրացնել համապատասխան դաշտում և վերջնական հաստատել գործարքը:



Խնդրում ենք լրացնել Ձեր վճարային քարտի տվյալները

Հաշվի նկարագրություն

E-CADASTRE1.AM

Վճարի մեծություն

400.00 AMD

Ձեր քարտի համարը

16 նիշ համարը բացատրելով

[Redacted card number field]

Ձեր անունը

Ինքնա անվան է քարտի վրա լինի: MR NAME SURNAME

[Redacted name field]

Քարտի գործողության վերջնաժամկետը

7 հուլիս

2020

CVC2/ CVV2 կոդ

Երեքնիշ թիվ, որը գտնվում է քարտի հակառակ կողմում

[Redacted CVC2/ CVV2 field]

ՊՆՏՐԵԼ



Подтверждение операции

На номер H3749****4660 будет отправлен пароль

Торговая точка : E-CADASTRE1.AM
Сумма : AMD 400.00
Дата : 11.03.2020
Карта : *****4433

Отправить

Отмена

Помощь



Подтверждение операции

Введите пароль для подтверждения операции

Торговая точка : E-CADASTRE1.AM
Сумма : AMD 400.00
Дата : 11.03.2020
Карта : *****4433

Пароль


58963

Получить пароль повторно

Подтвердить


Отмена

Помощь



15. Վճարումը հաստատելուց հետո Ձեր էլեկտրոնային փոստի հասցեին կստանաք Ձեր կողմից իրականացված վճարումը հավաստող անդորրագիր, ինչպես նաև «Դիմումի ընդունման վերաբերյալ ստացական»:

16. «Դիմումների ցանկ» բաժնում կարող եք տեսնել մուտքագրված դիմումը կից ներկայացված փաստաթղթերով:



Դիմումի պատասխանը պատրաստ լինելու դեպքում կից ներկայացված փաթեթի ցանկում կավելանա «Ավարտական փաստաթուղթ» տողը, որը ընտրելով կարող եք ծանոթանալ և ըստ անհրաժեշտության տպել այն:



Համակարգը հնարավորություն է տալիս առցանց ծանոթանալ և ըստ անհրաժեշտության տպել

ցանկացած փաստաթուղթ՝

- ավարտական փաստաթղթի համարը և գաղտնաբառը «Փաստաթղթերի դիտում» բաժնի համապատասխան դաշտերում լրացնելու դեպքում
- ստացականում ամրագրված դիմումի բանալին և գաղտնաբառը «Դիմումի ընթացք» բաժնի համապատասխան դաշտերում լրացնելու դեպքում

